ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН ПО
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ

"_____" _____2022
_____/_____

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 28.12.2021թ.
թիվ 483220 հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) տեղեկատվության ստացման բոլոր հարցումներին պատասխանում է սահմանված ժամկետում և սահմանված կարգով, որոնք ներառվում են քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ, իսկ տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն չի վարում:

Հայաստանի Հանրապետության վարչապետի համապատասխան հանձնարականների հիման վրա, ամենամսյա պարբերականությամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվում քաղաքացիներից ստացված բողոքների, առաջարկությունների, հարցումների, հանրագրերի, ինչպես նաև կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին տեղեկատվություն՝ սահմանված ձևաչափերին համապատասխան: Տեղեկատվությունը կազմվում է՝ օգտվելով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry2.0 համակարգի որոնողական գործիքից: Հաշվառվում են նաև Տեսչական մարմնի կողմից տրված պատասխաններն ըստ բնույթի:

ՀՀ, ք. Երևան ,0051, Կոմիտասի պող. 49/2
Հեռ./ֆաքս: (+374 12) 40 40 41
Էլ. փոստ: georgi.avetisyan@gov.am
Կայք: www.snund.am

РА, г. Ереван, 0051, пр. Комитаса 49/2
Тел./факс: (+374 12) 40 40 41
Эл. почта: georgi.avetisyan@gov.am
Веб-сайт: www.snund.am

Տեսչական մարմնի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության արդյունքների վերաբերյալ հանրային իրազեկումն ապահովելու նպատակով՝ տեղեկատվությունը հրապարակվում է պաշտոնական կայքում (https://snund.am/hy/page/qaghaqacineri-yndvounelvouthyvoun/98):

Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով՝ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է նշանակված Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Վարդուհի Հարությունյանը (https://snund.am/public/storage/uploads/hraman561-1_1626434875.pdf):

Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Վարդուհի Հարությունյանը 2019 թվականին մասնակցել է տեղեկատվության ազատության և հաղորդակցության վերաբերյալ վերաբերյալ «Արդյունավետ հաղորդակցությունը ժողովրդավարական հասարակությունում» սեմինարին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Signed by: AVETISYAN GEORGI 2312770121

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին/Ա.Խաչատրյան, հեռ. (+374 10) 206040

ՀՀ, ք. Երևան ,0051, Կոմիտասի պող. 49/2
Հեռ./ֆաքս: (+374 12) 40 40 41
Էլ. փոստ: georgi.avetisyan@gov.am
Կայք: www.snund.am

РА, г. Ереван, 0051, пр. Комитаса 49/2
Тел./факс: (+374 12) 40 40 41
Эл. почта: georgi.avetisyan@gov.am
Веб-сайт: www.snund.am